

## ՊԱՏԱՍԽԱՆ՝ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԱՇԱՐԻՆ

(հարցաշար՝ հասարակական կազմակերպությունների եւ լայն շրջանակների համար)

### Պատասխանող՝ Սառա Պետրոսյան («Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության ՏԻՄ ծրագրերի ղեկավար)

1. Խոշորացման գործընթացի վերաբերյալ ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը: Ձեր կարծիքով՝ կարո՞ղ է այն լուրջ հիմքեր ստեղծել տեղական ինքնակառավարման համակարգի եւ տարածքների հետագա զարգացման համար:

Այո, համայնքների խոշորացումը համայնքների զարգացման եւ տեղական վարչարարությունը բարելավելու նախադրյալներ կարող է ստեղծել:

2. Առաջարկվում է խոշորացման երկու մոդել՝ «փնջային» եւ «շրջանային»: Ծանո՞թ եք այս մոդելներին, դրանցից ո՞րն եք առավել արդյունավետ համարում մեր երկրի դեպքում:

Կարծում եմ, մեր երկրի ռեյիեֆի պայմաններում միանշանակ հնարավոր չէ պնդել, թե առաջարկված երկու մոդելներից հատկապես որն արդյունավետ կգործի, կարծում եմ ընտրությունը պետք է պայմանավորել տեղանքով:

3. Ի՞նչ կարելուր ռիսկեր եք տեսնում գործընթացն իրականացնելիս եւ ի՞նչ քայլերով է հնարավոր դրանք չեզոքացնել:

Ամենամեծ ռիսկը բնակչության ըմբոստությունը կարող է լինել, քանի որ

ա/ գյուղական բնակչությունը համակեցության կանոններին ընտելանալու ցանկություն չունի եւ իր բոլոր խնդիրների լուծումը իր համայնքի սահմաններում է ցանկանում տեսնել՝ մանկապարտեզ, դպրոց, մշակութային կյանք եւ այլն:

բ/ Ռիսկային է այն զանգվածը, որն աշխատանքն է կորցնում դրա արդյունքում եւ իր միջավայրում կարող է բացասական կարծիք ստեղծել գործընթացի մասին:

գ/ Մշտապես առկա է վտանգը, որ համայնքային կենտրոնը կարող կլանել բոլոր ռեսուրսները՝ դրանով ընդգծված անհամաչափություն ստեղծել բնակավայրերի միջեւ, որը ոչ միայն դժգոհության ալիք կառաջացնի, այլեւ կնպաստի ներքին միգրացիոն տեղաշարժերին: Այդ կերպ, եթե ոչ ուղղակի, ապա անուղղակի իրագործելի դարձնելով որոշ բնակավայրերի դատարկումը, որը այս ծրագրի ամենամեծ ռիսկն է համարվում:

դ/ կարծում եմ, մեկնաբանված չէ, թե միավորվելու դեպքում ինչպես է կատարվելու բյուջեի ծախսումները համայնքներում:

Բնակչության դիմադրությունը կոտրելու եւ ծրագրի առավելությունները համոզիչ ներկայացնելու համար շատ հմուտ գործիքներ պետք է կիրառվեն: Անհրաժեշտ է հասարակական կազմակերպությունների եւ լրատվամիջոցների ներգրավմամբ երկարատեւ եւ գրագետ քարոզչական աշխատանքներ իրականացնել տեղերում:

4. Առաջարկվող մոդելներով արդյոք արդյունավետ մեխանիզմներ ստեղծվա՞ծ են տեղական իշխանությունների օտարումը բնակչությունից բացառելու համար: Ի՞նչ նոր մեխանիզմներ կմատնանշե՞ք բնակչություն-տեղական իշխանություն կապը արդյունավետ դարձնելու համար:

Կարծում եմ, դեռեւս վաղ է հարցին հստակ պատասխան տալու համար, այդ բոլոր ռիսկերն ի հայտ կգան համակողմանի քննարկման ժամանակ, եւ մենք ասելիք կունենանք, երբ հատկապես համայնքներում, տեղական իշխանությունների հետ կարողանանք քննարկել այդ հարցերը եւ լսենք նրանց առարկությունները:

5. Արդյո՞ք տեղական հանրաքվեների արդյունքները պետք է որոշիչ լինեն այն դեպքում, երբ Սահմանդրության մեջ վերապահում է կատարված այդ մասով:

Միշտ էլ նախընտրելի է ժողովրդի տեսակետը լսելը, պարզապես իրազեկումն այնքան պրոֆեսիոնալ եւ համոզիչ պետք է լինի, որպեսզի մտահոգիչ չլինի հանրաքվե անցկացնելը:

6. Ձեր կարծիքով՝ բարեփոխումները կարո՞ղ են նպաստել առավել արդյունավետ, գործուն եւ կարող տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես՝ ավագանու, ձեւավորման համար:

Այո, քանի որ փոքր բնակավայրերում տեղային, ավանդական պատկերացումները շատ մեծ խոչընդոտ են տեղական ինքնակառավարման զարգացման համար: Հարկավոր է այնպիսի մեխանիզմների ներդրում, որոնք շահերի բախում կստեղծեն եւ վերահսկողություն ապահովվելու անհրաժեշտություն կստեղծեն, եւ այդ կերպ կխթանեն ավագանու գործունեությունը:

7. Ի՞նչ կարծիքի եք բնակավայրերի ընդհանուր ժողովի գաղափարի, համայնքի ղեկավարի ընտրության եղանակների (ուղղակի, թե անուղղակի) մասին:

Երկուսն էլ բնակչությանը համայնքային կառավարմանը մասնակից դարձնելու ձեռքից են եւ իբրեւ ժողովրդավարության էլեմենտներ անհրաժեշտ է դրանց կիրառումը:

**8. Ձեր գնահատմամբ՝ ի՞նչ առաջնահերթ քայլեր պետք է իրականացնի գործընթացի պատասխանատու մարմինը՝ Բարեփոխումների հաջողությունն ապահովելու համար:**

Ծրագրի հաջողությունը մեծապես պայմանավորված է լավ քարոզչությամբ եւ ոչ այնքան հեռուստատեղերներից, որքան բնակչության հետ անմիջական հանդիպումներով տարվող աշխատանքից: Նրանց բոլոր հարցերը պետք է սպառիչ եւ համոզիչ պատասխաններ ունենան:

**9. Ինչպիսի՞ն են Ձեր առաջարկությունները հանրային իրազեկման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ:**

Անմիջական աշխատանք բնակչության հետ՝ հանդիպումները պետք է լինեն խմբերով, որոնցում կընդգրկվեն որոշակի խավերի ներկայացուցիչներ եւ բոլորի հետ աշխատանքները պետք է տանել նրանց ընկալելի լեզվով եւ նրանց մտահոգությունների շրջանակում: Խմբակային քննարկումներից հետո դրանք կարող են դառնալ ընդգրկուն՝ համայնքային ժողովներից բացի նաեւ հեռուստաքննարկումներ տարբեր ֆորմատներով:

**10. Արդյոք այսօր երկիրը պատրաստ է նման Բարեփոխումների եւ եթե այո, դրանց իրականացման ինչպիսի՞ ժամկետներ եւ եղանակներ (փուլային, միաժամանակյա եւ այլն) կառաջարկեիք:**

Երկրին այսօր առավել, քան երբեւէ Բարեփոխումներ են անհրաժեշտ: Նախընտրելի է ծրագրի իրականացման փուլային տարբերակը՝ հնարավոր մեծ սխալներից խուսափելու համար: